

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԾԱԽՍԵՐԻ
ԴԻՄԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ
ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԻ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ
ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությունը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետությունում լաբորատոր հետազոտությունների (ծառայությունների) ծախսերի դիմաց ապահովագրական հատուցման և համավճարների չափերի սահմանման համար ծառայությունների գնի կամ ծախսերի նորմատիվի հաշվարկման միասնական մեթոդական մոտեցում, որը կիրառելի է արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններում իրականացվող լաբորատոր հետազոտությունների համար:

2. Լաբորատոր ծառայությունների գների հաշվարկն իրականացվում է միավոր ծառայության ինքնարժեքի որոշման միջոցով: Որպես միավոր ծառայություն կարող է հանդես գալ առանձին պարզ ծառայությունը՝ մեկ լաբորատոր թեստ (փորձ, հաշվարկ) կամ բարդ՝ մեկից ավելի թեստեր, համակցված մեկ լաբորատոր հետազոտության մեջ, որի համար տրամադրվում է մեկ միասնական եզրակացություն:

3. Յուրաքանչյուր լաբորատոր ծառայություն բաղկացած է հիմնական երեք փուլից.

- 1) նախապատրաստական՝ հետազոտության ենթակա նյութի վերցնում, ստացում, տեղափոխում,
- 2) հետազոտության ընթացք,
- 3) եզրափակիչ՝ հետազոտության արդյունքների ձևակերպում և սարքավորումների, տարածքի և այլնի մշակման պահանջվող աշխատանքներ:

Յուրաքանչյուր փուլի ծախսերը դիտարկվում են առանձին և այնուհետև ամբողջացվում մեկ լաբորատոր ծառայության ինքնարժեքում:

4. Եթե միևնույն լաբորատոր հետազոտությունը կատարվում է տարբեր մեթոդներով, որոնց ընթացքում օգտագործվող նյութերը, պարագաները կամ սարքավորումները տարբերվում են, ապա յուրաքանչյուր մեթոդի համար ծախսերը հաշվարկվում են առանձին:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Հիմնական բժշկական ստորաբաժանումներ՝ լաբորատոր ծառայություն, բաժին, կաբինետ, միջամտությունների սենյակ, որտեղ լաբորատոր հետազոտության նպատակով բուժառուից ստացվում է անհրաժեշտ կենսանյութը (երակային, մազանոթային արյուն, քսուք, մեզ և այլն) և իրականացվում է լաբորատոր հետազոտություն:

6. Ուղղակի ծախսեր՝ տվյալ ծառայության մատուցման գործընթացի հետ անմիջականորեն կապված և ամբողջովին տվյալ ծառայությանը վերագրվող ծախսեր, որոնք ներառում են աշխատուժի, լաբորատոր նյութերի և պարագաների, դեղորայքի ծախսերը, բժշկական հիմնական միջոցների (սարքավորումների և գործիքների) և գույքի ամորտիզացիան, և տեխնիկական սպասարկման ծախսերը:

7. Անուղղակի (վերադիր) ծախսեր՝ լաբորատոր ծառայության կազմակերպման, կառավարման, ինչպես նաև իրականացման նպատակով կատարվող ծախսեր, որոնք հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել առանձին ծառայությանը:

8. Միավոր ծառայություն՝ առանձին պարզ ծառայությունը՝ մեկ լաբորատոր թեստ (փորձ, հաշվարկ) կամ բարդ՝ մեկից ավելի թեստեր (փորձեր, հաշվարկներ)՝ համակցված մեկ լաբորատոր հետազոտության մեջ:

9. Ծառայության գնի հաշվարկ՝ մեկ միավոր (պարզ կամ բարդ) ծառայության ծախսերի հաշվարկման միջոցով ստացված միավոր ծառայության արժեք:

10. Աշխատուժի ծախս՝ ներառում է ծառայությունը իրականացնող բուժանձնակազմի աշխատավարձը, որը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

11. Հիմնական աշխատավարձ՝ օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտով, աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար սահմանված վարձատրության չափն է (ամսական կամ ժամային դրույքաչափը, գործավարձը):

12. Լրացուցիչ աշխատավարձ՝ առողջության համար վնասակար կամ վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում աշխատանքի համար, ինչպես նաև արտաժամյա, գիշերային աշխատանքների, հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերին կատարված աշխատանքների համար հավելումներն են, հավելավճարները, լրավճարները:

3. ՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

13. Լաբորատոր ծառայության ուղղակի ծախսերը հաշվարկվում են նորմատիվային (ստանդարտացված) ծախսերի գնահատման մեթոդով:

14. Ուղղակի ծախսերի հաշվարկը հիմնվում է հիմնական ուղղակի ծախսերի նորմերի և նորմատիվների վրա, որը կապված է երկու խումբ մեծություններից.

15. ծառայության յուրաքանչյուր միավորի համար պահանջվող ռեսուրսների չափման ֆիզիկական ցուցանիշ՝ աշխատուժի տեսակ, ծախսվող նյութի, պարագայի, լաբորատոր ռեակտիվների տեսակ, բժշկական սարքավորման, գործիքի տեսակ, որի մեծությունը կախված է յուրաքանչյուր միավորի ծախսի քանակից կամ տևողությունից,

16. յուրաքանչյուր միավորի համար հաշվարկվող աշխատավարձի նորմատիվային մեծություն և նյութերի, պարագաների, սարքավորումների ու գործիքների գներ:

17. Մեկ միավոր ծառայության ուղղակի ծախսերի ($\Sigma_{\text{ու}}$) հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$\Sigma_{\text{ու}} = \text{Ա}_\delta + \text{Սամ.} + \text{ՆՊ}_\sigma, \text{ որտեղ՝}$$

Ա_δ ՝ մեկ միավոր ծառայության աշխատուժի ծախսն է,

Սամ. ՝ բժշկական հիմնական միջոցների ամորտիզացիա, նորոգման ու տեխնիկական սպասարկման ծախսերն են,

ՆՊ_σ ՝ միավոր ծառայության նյութերի և պարագաների ծախսն է:

4. ԱՇԽԱՏՈՒԺԻ ԾԱԽՍԻ ՀԱՇՎԱՐԿ

18. Միավոր ծառայության աշխատուժի ծախսը հաշվարկելու համար կիրառվում են հետևյալ ցուցանիշները.

- 1) աշխատաժամանակի տարեկան տևողությունը աշխատողների յուրաքանչյուր կատեգորիայի համար,
- 2) յուրաքանչյուր ծառայության համար աշխատաժամանակի ծախսը՝ ըստ աշխատողների առանձին կատեգորիաների,
- 3) տարեկան նվազագույն և լրացուցիչ արձակուրդային օրերի թիվը աշխատողների յուրաքանչյուր կատեգորիայի համար:

19. Բուժանձնակազմի աշխատուժի ծախսերը ներառում են բժշկական ծառայության՝ լաբորատոր հետազոտության գործընթացում զբաղված աշխատողների հետևյալ կատեգորիաների հիմնական և լրացուցիչ աշխատավարձերը.

- 1) ավագ բուժանձնակազմ (բժիշկ, բժիշկ-լաբորանտ),
- 2) միջին բուժանձնակազմ (բուժքույր, լաբորանտ),
- 3) կրտսեր բուժանձնակազմ (սանիտար)՝ այն դեպքում, երբ հնարավոր է առանձնացնել աշխատաժամանակի ծախսը կոնկրետ ծառայության համար: Հակառակ դեպքում այն հաշվի է առնվում վերադիր ծախսերում:

20. Բժշկական անձնակազմի հիմնական աշխատավարձը հաշվարկելու համար անհրաժեշտ են հետևյալ ցուցանիշները.

- 1) առողջապահության նախարարության կողմից հաստատված նորմատիվային աշխատավարձերի չափերը,
- 2) օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի հավելումների չափը առողջության համար վնասակար կամ վտանգավոր գործոնների ազդեցության պայմաններում աշխատանքային պայմանների համար,
- 3) ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդի վճարները,
- 4) կառավարչական հարցերի, աշխատանքային խորհրդատվությունների, կարճատև ընդմիջումների, վերապատրաստումների իրականացման համար նախատեսված աշխատաժամանակի ծախսերը:
- 5) Հիմնական աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_{hi} = \sum_{i=1}^n \sigma_i * \varphi_i * U_{n+1+i}, \text{ որտեղ՝}$$

U_{hi} ՝ հիմնական աշխատավարձի տարեկան գումարն է,

σ_i ՝ աշխատողի յուրաքանչյուր կատեգորիայի համար տարվա 12 ամիսների և նվազագույն ու լրացուցիչ արձակուրդի (վերաժված ամսի) հանրագումարն է $(12 + \text{Արձակ.օր}/21)$,

U_{n+1+i} ՝ աշխատակիցների առանձին կատեգորիաների համար սահմանված աշխատավարձի նորմատիվային մեծությունն է,

φ_i ՝ աշխատողի յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված վնասակարության գործակիցն է:

21. Առանձին դեպքերում, երբ կարիք կա հաշվարկել ստացիոնար պայմաններում գիշերային հերթապահության ռեժիմով աշխատող լաբորատոր ստորաբաժանման ծառայության ծախսը՝ բժշկական անձնակազմի լրացուցիչ աշխատավարձը հաշվարկելու համար անհրաժեշտ կլինեն հետևյալ ցուցանիշները.

- 1) հերթապահության համար վարձատրությունը՝ ելնելով հերթապահության ժամերից և մեկ ժամի վարձատրության դրույքաչափից:
- 2) օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի այլ հավելումները՝ գիշերային ժամանակ՝ 22:00-ից մինչև 6:00-ը և տոնական օրերին աշխատանքի համար,
- 3) լրացուցիչ աշխատավարձի հաշվարկումն իրականացվում է աշխատողների առանձին կատեգորիաների համար լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկման հանրագումարով, հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_L = U_{\sigma} * (\sigma_{\text{հերթ}} + \sigma_{\text{տ}}), \text{ որտեղ՝}$$

U_L -ը՝ լրացուցիչ աշխատավարձի գումարն է,

U_{σ} ՝ ծառայություն մատուցող բուժանձնակազմի ծախսն է մեկ միավոր ժամանակի հաշվով, որը որոշվում է ամսական աշխատավարձի (հաշվի առնելով հավելումը) և աշխատաժամանակի հարաբերակցությամբ:

$\sigma_{\text{հերթ}}$ ՝ հերթապահության համար հաշվարկված տարեկան հերթապահության ժամանակի նորման է,

$\sigma_{\text{տ}}$ ՝ տոների և հիշատակի օրերի համար հաշվարկված տարեկան ժամանակի նորման է:

22. Միավոր լաբորատոր ծառայության համար աշխատուժի ծախսը որոշվում է ըստ ծառայություն մատուցող բուժանձնակազմի առանձին կատեգորիաների միավոր

Ժամանակի հաշվով աշխատուժի ծախսից ($U_{\text{տ}}$) ու տվյալ՝ ըստ նորմատիվի կամ փաստացի դիտարկման հիման վրա միավոր ծառայության համար ծախսվող աշխատաժամանակից ($U_{\text{տ}}$), հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_{\text{տ}} = U_{\text{տ}} * U_{\text{տ}}, \text{ որտեղ՝}$$

$U_{\text{տ}}$ ՝ միավոր ծառայության աշխատուժի ծախսն է:

23. Միավոր ժամանակի համար աշխատուժի ծախսը $U_{\text{տ}}$ հաշվարկվում է ըստ բուժանձնակազմի առանձին կատեգորիաների հիմնական և լրացուցիչ աշխատավարձի հիման վրա, հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_{\text{տ}} = U / (U_{\text{ա}} * Q_{\text{տ}}), \text{ որտեղ՝}$$

U ՝ տարեկան հիմնական և լրացուցիչ աշխատավարձի գումարն է ըստ աշխատողների առանձին կատեգորիաների ($U = U_{\text{հիմն}} + U_{\text{լ}}$),

$U_{\text{ա}}$ ՝ մեկ լրիվ աշխատաժամանակով աշխատող աշխատակցի աշխատաժամանակի միջին տարեկան տևողությունն է,

$Q_{\text{տ}}$ ՝ աշխատաժամանակի օգտագործման գործակիցն է, որն ըստ առանձին մասնագետների և աշխատողների կատեգորիաների սահմանվում է նախօրոք, ելնելով կառավարչական հարցերի, աշխատանքային խորհրդատվությունների, կարճատև ընդմիջումների, վերապատրաստումների իրականացման համար պահանջվող ժամանակից:

5. ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

24. Ծառայությունների համար լաբորատոր սարքավորումների և գործիքների ամորտիզացիան և տեխնիկական սպասարկման ծախսերը հաշվարկելու համար անհրաժեշտ է.

1) տվյալ հիմնական միջոցի հաշվեկշիռային կամ շուկայական գինը (կարելի է համադրել մի քանի մատակարարների կողմից առաջարկված գներ),

- 2) օգտակար գործողության ժամկետը,
- 3) ընթացիկ նորոգման և տեխնիկական սպասարկման համար նախատեսված տարեկան ծախսերի նորմատիվը,
- 4) տվյալ սարքի, գործիքի միջոցով կատարվող ծառայությունների քանակը,
- 5) տվյալ ծառայության վրա սարքավորման, գործիքի օգտագործման նորմատիվային ժամանակը:

Հաշվարկը կատարվում է ըստ առանձին սարքավորման, գործիքի տեսակների հետևյալ բանաձևի միջոցով.

$$U_{ամ.} = A_{մ տար.} / P_{տարեկ.}, \text{ որտեղ՝}$$

$U_{ամ.}$ ՝ ամորտիզացիա և նորոգման ու տեխնիկական սպասարկման ծախսեր,

$A_{մ տար.}$ ՝ ելնելով օգտակար գործողության ժամկետից սարքի տարեկան ամորտիզացիան է,

$P_{տարեկ.}$ ՝ տվյալ սարքի միջոցով կատարվող տարեկան ծառայությունների քանակն է:

25. Լաբորատոր ծառայությունում կիրառվող սարքավորումների ընթացիկ նորոգման և տեխնիկական սպասարկման համար նախատեսված տարեկան ծախսը սահմանվում է 5-ից 8 տոկոս՝ կախված սարքավորման տեսակից: Այդ ծախսատեսակը միավոր ծառայության ծախսը հաշվարկելիս միացվում է սարքի տարեկան ամորտիզացիային՝ մաշվածության գումարին:

26. Եթե տվյալ սարքի միջոցով իրականացվում է մեկից ավելի տեսակի լաբորատոր հետազոտություն, ապա ամորտիզացիան հաշվարկելիս հաշվի է առնվում յուրաքանչյուր տեսակի տեսակարար կշիռը (տոկոսը), ելնելով յուրաքանչյուրի ծավալից և իրականացման համար սարքի նորմատիվային ժամանակից:

27. Սարքավորումների մաշվածության և տեխնիկական սպասարկման ծախսերը դիտարկվում են որպես վերադիր (անուղղակի) ծախս, եթե՝

- 1) ելնելով տեխնոլոգիական պահանջներից լաբորատոր ծառայության համար չի պահանջում թանկարժեք սարքավորումների կիրառում,
- 2) լաբորատոր ծառայությունում սարքավորումը, գործիքը օգտագործվում է ընդհանուր բոլոր հետազոտությունների տեսակների համար:

6. ԼԱԲՈՐԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ և ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

28. Նյութերի և պարագաների ծախսը հաշվարկվում է տվյալ ծառայության համար հիմնավորված ու նախապես սահմանված ցանկերի համաձայն՝ ըստ միավորի համար նշված նորմատիվային կամ փորձագիտական գնահատմամբ որոշված քանակի և գների:

29. Գների որոշման համար հիմք է հանդիսանում մեծածախ շուկայական միջինացված գները, կամ մեկից ավելի մատակարարներից ստացված գնացուցակների համադրման արդյունքում հաշվարկված միջին կշռված գները:

30. Միավոր ծառայության նյութերի և պարագաների ընդհանուր ծախսը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$\mathbf{N\text{Պ}_{\Sigma}} = \mathbf{N_{նորմ}} * \mathbf{Գ_{ինմիավ.}} + \mathbf{\text{Պ}_{նորմ}} * \mathbf{Գ_{ինմիավ.}}, \text{ որտեղ՝}$$

$\mathbf{N\text{Պ}_{\Sigma}}$ ՝ միավոր ծառայության նյութերի, պարագաների ծախսն է ըստ առանձին տեսակների, $\mathbf{N_{նորմ}}$ ՝ ըստ առանձին տեսակների նյութերի ծախսն է մեկ միավոր ծառայության համար սահմանված նորմատիվի համաձայն,

$\mathbf{\text{Պ}_{նորմ}}$ ՝ ըստ առանձին տեսակների պարագաների ծախսն է մեկ միավոր ծառայության համար սահմանված նորմատիվի համաձայն,

$\mathbf{Գ_{ինմիավ.}}$ ՝ նյութերի, պարագաների միավորի գինն է:

31. Տեխնոլոգիական պահանջներից ելնելով լաբորատոր հետազոտության տրամաչափարկման (կալիբրավորման) և որակի ներքին վերահսկողության ապահովման համար ծախսվող ռեսուրսների, ինչպես նաև բազմակի օգտագործման պարագաների գումարները տվյալ խմբաքանակի հետազոտությունների ծախսերին վերագրվում են համամասնորեն:

7. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

32. Անուղղակի ծախսերում հաշվարկվում են բուժհաստատության գործունեության հետ կապված բոլոր այն հիմնավոր ծախսերը, որոնք չեն ներառվել ուղղակի ծախսերում: Անուղղակի ծախսերին են դասվում.

- 1) վարչատնտեսական և սպասարկող անձնակազմի աշխատավարձը և դրա հետ ուղղակիորեն կապված այլ ծախսերը,
- 2) կոմունալ և կապի ծառայությունների վճարները,
- 3) տնտեսական ծախսերը՝ ընթացիկ տնտեսական նպատակների համար նյութեր, իրեր և այլն (բացառությամբ այն ծախսերի, որոնք հաշվի են առնվել ուղղակի ծախսերը հաշվարկելիս),
- 4) գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը,
- 5) սպասարկման ծառայությունների վրա կատարված ծախսերը,
- 6) տարածքի և ոչ բժշկական սարքավորումների, հիմնական միջոցների ընթացիկ նորոգման ծախսերը, անմիջականորեն ծառայության հետ չկապված փափուկ գույքի, հիմնական միջոցների (շենքի, շինության, վարչական գույքի) մաշվածությունը,
- 7) այն բժշկական սարքավորումների և գործիքների մաշվածությունը և տեխնիկական սպասարկման ծախսը, որը ուղղակի ծախսերի հաշվարկներում հաշվի չի առնվել,
- 8) սանիտարական և հակահիդրոէպիդեմիոլոգիայի նորմերի պահպանման ծախսեր,
33. չփոխհատուցվող հարկեր, տուրքեր, վճարներ,
34. Որպես անուղղակի ծախս հաշվի չեն առնվում.
- 1) սարքավորումների և այլ հիմնական միջոցների ձեռք բերման վրա կատարված ծախսերը,
- 2) կապիտալ ներդրումները,
- 3) վարձակալության տրված տարածքների մասով շենքի ամրոտիզացիան,
- 4) շահութահարկը,
- 5) պարտավորությունները չկատարելու համար վճարված տույժերը, տուգանքները:
35. Մեկ միավոր ծառայության հաշվով անուղղակի (վերադիր) ծախսը հաշվարկվում է անուղղակի ծախսերի բաշխման գործակցի միջոցով՝ ըստ բժշկական անձնակազմի աշխատավարձի, հետևյալ բանաձևով.

$$\Sigma_u = U_{\Sigma} * Q_u, \text{ որտեղ՝}$$

Σ_u ՝ միավոր ծառայության անուղղակի ծախսն է,

U_{Σ} ՝ միավոր ծառայության աշխատուժի ծախսն է,

Q_u ՝ անուղղակի ծախսերի բաշխման գործակիցը:

36. Անուղղակի (վերադիր) ծախսերի բաշխման գործակիցը հաշվարկվում է ըստ բժշկական անձնակազմի աշխատավարձի, հետևյալ բանաձևով.

$$Գ_u = \mathcal{L}_u / \mathcal{U}_\sigma, \text{ որտեղ՝}$$

$\mathcal{G}_u$ ՝ անուղղակի ծախսերի բաշխման գործակիցն է,

$\mathcal{L}_u$ ՝ մեկ տարվա ընթացքում կատարված անուղղակի ծախսի հանրագումարն է՝ ըստ ծախսերի տեսակների ուղիղ հաշվարկով,

$\mathcal{U}_\sigma$ ՝ ընդամենը բուժանձնակազմին հատկացված հիմնական և լրացուցիչ աշխատավարձի տարեկան ֆոնդն է:

8. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԸ՝ ԻՆՔՆԱՐԺԵՔ

37. Ծառայության ծախսը՝ ինքնարժեքը, որոշվում է ծառայության ուղղակի և անուղղակի ծախսերի հանրագումարով, հետևյալ բանաձևի միջոցով.

$$\mathcal{I} = \mathcal{O}_{\text{ու}} + \mathcal{O}_u, \text{ որտեղ՝}$$

$\mathcal{I}$ ՝ միավոր ծառայության ինքնարժեքն է,

$\mathcal{O}_{\text{ու}}$ ՝ միավոր ծառայության ուղղակի ծախսն է,

$\mathcal{O}_u$ ՝ միավոր ծառայության անուղղակի (վերադիր) ծախսն է:

9. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԻՆ

38. Լաբորատոր ծառայության գինը որոշվում է ծառայության ծախսի՝ ինքնարժեքի և չնախատեսված ծախսերի հանրագումարով, հետևյալ բանաձևի միջոցով.

$$\mathcal{O}_{\text{գին}} = \mathcal{I} + \mathcal{O}_2, \text{ որտեղ՝}$$

$\mathcal{O}_{\text{գին}}$ - մեկ միավոր ծառայության գինն է,

$\mathcal{I}$ – միավոր ծառայության ինքնարժեքն է,

$\mathcal{O}_2$ – չնախատեսված ծախսերի համար հաշվարկված մեծությունն է:

39. Լաբորատոր հետազոտությունների (ծառայությունների) դիմաց ապահովագրական հատուցման և համավճարների մեջ չնախատեսված ծախսերը հաշվարկվում են հիմք ընդունելով ոչ բժշկական և բժշկական այլ ծախսերի հանրագումարները, որոնք հաշվի են առնում բժշկական ծառայությունների մատուցման և

սպասարկման վրա ազդող հատուկ (բժշկական ծառայության առանձնահատկություններ, բժշկական կազմակերպության առանձնահատկություններ) պայմանները:

40. Չնախատեսված ծախսերի սահմանային չափերն ընդունվում են ըստ լաբորատոր ծառայության բնույթի, տեսակի՝ սահմանելով ինքնարժեքի նկատմամբ մինչև 10 տոկոս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ